Վավերացնում եմ՝

Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզպետ

_____ Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ

<<25_>> դեկտեմբեր 2015թ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի տարեկան ծրագիր

Տարի 2016

Ներածություն

Ներքին աուդիտի տարեկան ծրագիրը հանդիսանում է կազմակերպության աուդիտի 2016թ. պլանավորման փաստաթուղթ: Տարեկան ծրագիրը հանդիսանում է կազմակերպության ներքին աուդիտի գործունեության և զարգացման հիմնական փաստաթուղթը, որում նկարագրվում են աուդիտի նպատակներին արդյունավետ կերպով հասնելու համար ընտրված աուդիտի միջոցները: Ծրագիրը մշակվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան: Արտածրագրային աուդիտները իրականացվում են մարզպետի հանձնարարականներով:

Ներքին աուդիտի ստորաբաժանման դերը և նշանակությունը

Ներքին աուդիտը հանդիսանում է անկախ և օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ, որն ուղղված է կազմակերպության գործունեության բարելավմանը և կազմակերպության համար հավելյալ արժեքի ստեղծմանը: Կազմակերպության կառավարչական գործընթացների, ներքին հսկողության համակարգի, ռիսկերի կառավարման գործընթացների համակարգված և կարգավորված գնահատման ու դրանց բարելավման միջոցով ներքին աուդիտն աջակցում է կազմակերպությանը վերջինիս նպատակների արդյունավետ իրականացման գործում:

Ներքին աուդիտի գործունեության առաքելությունն է կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին հավաստիացնել, որ կազմակերպության ստորաբաժանումների ղեկավարները պատշաճորեն կատարում են իրենց վրա դրված պարտականությունները (ներքին հսկողության, ռիսկերի կառավարման և կառավարչական գործընթացների համակարգերի ներդնումը և պահպանումը):
Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի գործունեության նպատակներն են.
1) օժանդակել հանրային հատվածի կազմակերպություններին լինել հաշվետու ողջ հանրության առջև՝ գնահատելով վերջիններիս կողմից օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը և իրականացված գործառույթների օգտավետությունը և արդյունավետությունը,
2) օժանդակել հանրային ոլորտի կազմակերպությունների ղեկավարներին հասնել իրենց առջև դրված նպատակներին՝ բարելավելով կազմակերպության համակարգերը և ծառայությունները,
3) իր ներկայությամբ նվազեցնել խարդախության, վատնումների և այլ չարաշահման դեպքերի տեղի ունենալու հավանականությունը,
4) ապահովել աշխատակիցների վարքագծի համապատասխանությունը սահմանված վարքագծի կանոններին:

Տարեկան ծրագրի պլանավորումը և հաստատումը

Աուդիտի ռազմավարական ծրագրի իրականացման նպատակով ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը մշակում և կազմակերպության ղեկավարի ու ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանն է ներկայացնում առաջիկա տարում կազմակերպության ներքին աուդիտի տարեկան ծրագիրը (այսուհետ՝ տարեկան ծրագիր): Դիտողությունների և առաջարկությունների հիման վրա լրամշակված տարեկան ծրագիրը և դրա փոփոխությունները հաստատվում են ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից և վավերացվում կազմակերպության ղեկավարի կողմից:

Ներքին աուդիտի ստորաբաժանման հետ փոխկապակցված գործունեության տեսակները

ա. շարունակական մասնագիտական վերապատրաստում,
բ. ներքին աուդիտի կոմիտեի նիստերին մասնակցությունը,
գ. ներքին աուդիտի մասին սեմինարների վարումը և դրանց մասնակցությունը:

Ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքների կազմակերպումը

Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կազմակերպում և ղեկավարում է բաժնի աշխատանքները՝ բաժնի աուդիտորների միջոցով, ինչպես նաև ելնելով անհրաժեշտությունից հրավիրում փորձագետներ և արտաքին աուդիտորներ:

Աշխատանքները կազմակերպվում են ՀՀ օրենսդրության, ներքին աուդիտի ստանդարտների, վարքագծի կանոնների և ընթացակարգերի համապատասխան:

Հաշվետվությունները

Հաշվետվությունների ներկայացման նպատակն է հավաստիացում տրամադրել կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին՝ կառավարչական գործընթացների, ռիսկերի կառավարման և հսկողության համակարգի վերաբերյալ:
-Աուդիտորական արդյունքների ամփոփումից հետո ներքին աուդիտորները կազմում են արդյունքների մասին նախնական հաշվետվություն: Նախնական հաշվետվությունը պետք է կազմված լինի հաշվետվությանը ներկայացվող պահանջներին համապատասխան: Նախնական հաշվետվությունը տրվում է աուդիտի ենթարկվող միավորին դիտողությունների ներկայացման համար:
-Նախնական հաշվետվության վերաբերյալ աուդիտի ենթարկվող միավորը 5 աշխատանքային օրվա ընթացքում պետք է ներկայացնի իր դիրքորոշումը, դիտողությունները և առաջարկությունները:
-Անհրաժեշտ քննարկումներից հետո պատրաստվում և կազմակերպության ղեկավարին, ներքին աուդիտի կոմիտեին և ներքին աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարին է ներկայացվում կատարված աուդիտորական առաջադրանքի վերջնական հաշվետվությունը: Հաշվետվության ներկայացման ժամկետը սահմանվում է դուրս գալուվ կատարված աուդիտի ծավալից և բարդությունից:
Միջանկյալ հաշվետվություններ
-Աուդիտի իրականացման ընթացքում հրատապ խնդիրներ առաջանալու դեպքում և դրանց բարձր ռիսկայնությամբ պայմանավորված ներքին աուդիտորներն առաջացած խնդիրները կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացնելու համար կազմում են միջանկյալ հաշվետվություններ:
Միջանկյալ հաշվետվությունների կազմումը չի ազատում վերջնական հաշվետվության կազմելու պատասխանատվությունից:
Ներքին աուդիտի տարեկան հաշվետվություններ
-Ներքին աուդիտի տարեկան հաշվետվությունը պետք է ներկայացվի կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը:

Հավելված

Միավոր	Աուդիտի տեսակ
<<Անի-Պեմզայի առողջության կենտրոն>> ՊՈԱԿ-ի գնումների գործընթաց	Համակարգի գնահատման աուդիտ
<< Կարմիր խաչի անվան պոլիկլինիկա>> ՓԲԸ	Ֆինանսական աուդիտ
<<Մարալիկի առողջության կենտրոն>> ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Փանիկի առողջության կենտրոն>> ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Գյումրու թիվ 19 հիմնական դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Գյումրու թիվ 41 հիմնական դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Գյումրու թիվ 43 հիմնական դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Գյումրու թիվ 44 հիմնական դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Արթիկի թիվ 1 հիմնական դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ

<<Փ. Մանթաշի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Պեմզաշենի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Տուֆաշենի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Բենյամինի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Գետքի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Լեռնուտի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Կապսի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Կառնուտի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Հայկավանի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ

<<Ղարիբջանյանի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Բասենի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Մեծ Սարիարի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Շիրակի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Ոսկեհասկի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Ջրառատի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Ջաջուռ կայար. տարրական դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Աղինի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Անի Կայարանի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Անի Պեմզայի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ

<<Իսահակյանի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Լանջիկի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Հայկաձորի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Ձորակապի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Շիրակավանի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Սառնաղբյուրի միջնակարգդպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Քարաբերդի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Աշոցքի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Արփենիի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ

<<Բավրայի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Թավշուտի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Ղազանչիի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Մ.Սեպասարի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Փ. Սարիարի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Արեգնադեմի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Զառիշատի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Ծաղկուտի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Մեղրաշատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ

<<Ողջիի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Շիրակի մարզի երկրագիտական թանգարան >> ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
<<Գյումրու քաղաքային կենցաղի և ժողովրդական ճարտարապետության թանգարան>> ՊՈԱԿ	Ֆինանսական աուդիտ
Մարզպետարանի գնումների գործընթաց	Համակարգի գնահատման աուդիտ